2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 178.9 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 181.4 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 97.3%-ով և 85.8%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշների կատարումը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 21.5%-ով, ծախսերի գծով՝ 19.5%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9%-ով կամ 14.8 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվին, որոնք 10.8%-ով (16.6 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 11.1%-ով (1.1 մլրդ դրամով), իսկ արտաքին աղբյուրներից ստացվել են ընդամենը 141.4 մլն դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ նախորդ տարվա 795.6 մլն դրամի դիմաց:

Պետական բյուջեի եկամուտների 94.9%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5%-ը՝ այլ եկամուտների, 0.1%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 3.9 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում ծրագրված մուտքերի 91.7%-ը:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 140 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 99.9%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

եկամուտներն աճել են 10.1%-ով կամ 12.9 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, ռոյալթիի և եկամտահարկի մուտքերի աճով:

Հարկերի և տուրքերի 49.1%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 68.8 մլրդ դրամ և 8.3%-ով կամ 5.3 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 40 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, ավելի քան 28.7 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.4%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 8.9 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 5 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 6.4%-ով կամ 614.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքներից մուտքերի 22.6%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով անկմամբ: Միևնույն ժամանակ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերն աճել են 26.7%-ով կամ 836.9 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 14.9%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 20.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 12.5%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 17.6 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 8.7%-ով կամ 1.4 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 6.8 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 4.9%-ը ՝ 2.2%-ով գերազանցելով 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 4.4 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 99.2%-ը: Նախորդ

տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 27%-ով կամ 945.5 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են ավելի քան 5.1 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.7%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.8%-ով կամ 313 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 2.7 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 57.5%-ով կամ 976.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 4.7 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 1.7 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 999.3 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 465 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 572.4 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 178.9 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 134.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 410.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 10.5 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 246.3 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 2.4 անգամ կամ 2.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով: Նշենք, որ ռոյալթիի գծով մուտքերն առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 1.7 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում

փաստացի մուտքագրված 190.8 մլն դրամի և ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախատեսված 1 մլրդ դրամի դիմաց: Նշված բարձր ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընթացիկ տարում գումարներ են մուտքագրվել նախորդ տարվա պարտավորությունների մարման նպատակով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 29.9 մլրդ դրամ՝ 4.6%-ով գերազանցելով եռամսյակային ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 14.2%-ով կամ 3.7 մլրդ դրամով:

2011 թվականի առաջին եռամսյակում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 141.4 մլն դրամ է մուտքագրվել հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ կազմելով եռամսյակային ծրագրով նախատեսվածի 55.6%-ը: Հաշվետու ժամանակահատվածում Եվրամիությունից նախատեսվել էր ստանալ շուրջ 7 մլրդ դրամ դրամաշնորհ՝ ընդհանուր բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, որը, սակայն, չի ստացվել: Արդյունքում դրամաշնորհների կատարողականի ցուցանիշը կազմել է ընդամենը 1.9%:

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են ավելի քան 8.9 մլրդ դրամ և 13.2%-ով գերազանցել եռամսյակային ծրագիրը: Ծրագրի գերազանցումը մեծ մասամբ ապահովվել է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների հաշվին, որոնք կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ և 49%-ով կամ 478.5 մլն դրամով գերազանցել ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 58.1%-ով կամ ավելի քան 2.0 մլրդ դրամով: Վերջին հանգամանքով է հիմնականում պայմանավորված 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների 11.1%-ով կամ 1.1 մլրդ դրամով անկումը: Բարձր ցուցանիշ է ապահովվել նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի հաշվին, որոնք կազմել են 539.6 մլն դրամ և 60.1%-ով կամ 202.6 մլն դրամով գերազանցել են ծրագրային ցուցանիշը: Ծրագրի գերազանցում է արձանագրվել նաև պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացվող տոկոսավճարների գծով, որոնք կազմել են 521.1 մլն դրամ և 76.2%-ով կամ 225.3 մլն դրամով գերազանցել ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ

նշված մուտքերը նվազել են 29.4%-ով կամ 216.8 մլն դրամով: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 1.3 մլրդ դրամ է մուտքագրվել պետական բյուջե իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ 98.1%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 7.1%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը: Ծրագրի 4%-ով կամ շուրջ 188.8 մլն դրամով գերազանցում է արձանագրվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերի աճը կազմել է 15.2% կամ 655.1 մլն դրամ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 181.4 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 85.8%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է ընթացիկ ծախսերի գծով: Մասնավորապես՝ 166.9 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 14.4 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 2.1 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի 41.7%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 6.6%-ով կամ 11.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների, նպաստների, կենսաթոշակների, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, այլ ծախսերի և պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 166.9 մլրդ դրամ՝ 86.4%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 4.9%-ով կամ 7.8 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 15.6 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 1 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 92.4%-ը և 82.6%-ը: Նախորդ տարվա հունվար-մարտ ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 5.4%-ով և 4.9%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 29.6 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրի 82%-ը և 5.6%-ով

գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 7.5 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 92.1%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 5.6 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 1.9 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 22.3%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին: Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ միջին և երկարաժամկետ առումներով դրամական շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 3.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 93.6%-ը և 1.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Շուրջ 18.4 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 18 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 379.1 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 8.1 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 78.5%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.2%-ով:

2011 թվականի հունվար-մարտ ամիսների պետական բյուջեի ծախսերի 34.5%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 62.6 մլրդ դրամ՝ 92.1%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը և 7.4%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 46.6 մլրդ դրամ (94.6%) են կազմել կենսաթոշակները, 16 մլրդ դրամ (85.5%)՝ նպաստները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 28.4 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 80.3%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը և 6.3%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 14.4 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 79.5%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 14.5 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնք կատարվել են 79.9%-ով: 78.6 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ եռամսյակային ծրագրով նախատեսված 6.2 մլն դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 78.3 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 31.7%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով ծախսերի ավելացմամբ:

<u>ՀՀ պետական բյուջեի պակասուրդը</u>

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 2.4 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 27.5 մլրդ դրամի դիմաց: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջեի ազատ միջոցներից եռամսյակային ծրագրով նախատեսված 30.7 մլրդ դրամից օգտագործվել է 12.7 մլրդ դրամ: Բացի այդ, չեն ստացվել արտաքին աղբյուրներից նախատեսված 12.9 մլրդ դրամի վարկային միջոցները: Անցած ժամանակահատվածում ներքին աղբյուրների գծով ֆինանսավորման ցուցանիշը կազմել է 15.3 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ -12.9 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 3.6 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցները, 11.7 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները: Մասնավորապես՝ 3.6 մլրդ դրամ ստացվել է գանձապետական պարտատոմսերից: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով: Այդ նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 11.1 մլն դրամ: 1.2 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ 88.6%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 2.15 մլրդ դրամի վարկեր, որից 1 մլրդ դրամ՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման, 1 մլրդ դրամ՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար

տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկեր տրամադրելու նպատակով:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -12.9 մլրդ դրամ, որից -2.8 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների, -10 մլրդ դրամը՝ ֆինանսական ակտիվների գծով: Նշված 2.8 մլրդ դրամն ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 1.8 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 572.2 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 412.0 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 16.5 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը: 9.6 մլրդ դրամ տրամադրվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 120.9 մլն դրամի վճարում՝ նախատեսված 71.9 մլն դրամի փոխարեն: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 434.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 140.9 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: